

հաճին, որով պատկերահիւսուած էին զոյգ իր թեւերը, Երուսաղէմի պատմական շէնքերով ու թուականներով, ազգը պահելը այդ մարզերուն մէջ առաքինութիւն ըլլալուն) թուրքի մը չափ, եթէ ոչ անոնց շատ մը գեղացիներէն աւելի, ընտանի էր թուրքերուն լեզուն, բարձրուն, ախորժակներուն ու տօնէ, մեռելէ, հարսանիքէ գոյաւոր միւս սովորութեանց, որոնց մէջ կը խտանայ ժողովուրդները իրարմէ տարբերող իսկութիւնը. ան՝ որ դարերու հոլովումով պիտի բիւրեղանայ ու դիմագիծը տայ որոշ քաղաքակրթութեան: Թուրքերը չորս-հինգ դար ունին իրենց ետին: Աւելի ճիշդ՝ դար մը միայն: Վասնզի կանխողներուն մէջ անոնք շարժական բանակներ եղած են, քան ժողովուրդ, որ կը նստի իր գեղին ու քաղաքին մէջ, ենթարկուելու համար դանդաղ, բայց կերպադրիչ անոր հոսումներուն, առնելով մոյնք ու հոգիի շէնք: Անոնք, որ պտտած են երբեմն օսմանեան կայսրութիւնը, թուրքի մէկ տիպար միայն կը ճշդեն - մոնկոլատիպը: Մնացեալները, կրօնափոխ տարրեր են ու տակաւին չեն փախած իրենց անցեալին ճարտարապետած հոգեկան կառոյցէն:

Մսավաճառ երիտասարդը հոյակապ բխումն էր լեռնային սերմին, հարաւի գաղջ ու յուռթի տափաստաններուն վրայ: Անիկա շատ քիչ գիտէր իր հայրերուն լեզուն, որ տեղի տուած է Ալիս գետէն արեւմուտք ու Տաւրոսէն հարաւ մեծ ոստայններու մէջ, աւաններու շրջանակին պահելով ինքզինքը նախատիպ կազմով մը: Առաջնորդին յանձնարարութեամբը պիտի ընկեր ունենար Մատթէոս Մելիքեանը, ուսուցիչ, Կարնոյ կողմերէն: Չէր առնուած գաղտնիքին մէջ, Մաթիկին իսկ պահանջովը, որ ինքզինքը արդէն զինուորագրած էր մահուան, պարզ ու արի համեստութեամբ մը, որ անոր խորունկ գեղեցկութիւնը կը շինէր: Մարդ անոր հետ բաւարար չփումէ մը յետոյ միայն կը հասնէր այդ ստուգութեան: Իր գաղտնիքին մէջ մինակ ըլլալու այս յամառ պահանջը ներքին ձայն մըն էր անոր համար: Դէպքերը ցոյց տուին, որ իրաւունք ու-